



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՅԻՒՍՈՒՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԻՉ ԼԵՒՆ ԳԱԹԾՐՃԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Ուրբաթ, 12 Սեպտեմբերի յետմիջօրեին Ազգային Առաջնորդարան այցելեց աշուղական երգերու վաստակաւոր մեկնաբան՝ ժողովրդային երգիչ Լեւոն Գաթըրճեան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ:

Լեւոն Գաթըրճեան Առաջնորդ Սրբազանին նուիրեց նոր հրատարակած երգերու խտասալիկը, որ կը կրէ «Խօսինք Քայերեւ» խորագիրը եւ երգի ու երաժշտութեան ճամբով պատգամ մը կը փոխանցե նոր սերունդներուն:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց վաստակաշատ երգիչին այս գործը, ինչպէս նաեւ հայ երգի տարածման ու ժողովրդականացման մէջ անոր ունեցած ներդրումը, եւ իր կարգին՝ յուշանուեր մը յանձնեց Լ. Գաթըրճեանի:

Նկատի ունենալով, որ Լ. Գաթըրճեան առաջին անգամ ըլլալով կ'այցելեր Ազգ. Առաջնորդարանի նոր շենքը, իր հիացումը արտայայտեց անոր յղացքին մասին ու պատրաստակամութիւն յայտնեց համերգ մը տալու նորակառոյց սրահին մէջ:

PRELATE MEETS WITH POPULAR SINGER LEVON KATERJIAN

On the afternoon of Friday, September 12th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy popular singer Levon Katerjian. Mr. Katerjian had come to present the Prelate with a copy of his new CD which is dedicated to the Armenian language.

The Prelate commended Mr. Katerjian for his latest undertaking and for his contribution to Armenian music in general, and presented him with a memento.

Given it was his first visit to the headquarters, Mr. Katerjian was given a tour of the building, during which he expressed his readiness to give a concert in the new hall.